



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. ՄԻՄՈՆՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի և 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 33-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N 3 հավելվածի 4.3-րդ և 4.5-րդ կետերի, հիմք ընդունելով *Ա. Միմոնյանի* անձնական դիմումը՝ կարգադրում եմ.

1. *Արմեն Վարդանի Միմոնյանին* 2019 թվականի մայիսի 15-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2002 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված N 1 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել *Արմեն Վարդանի Միմոնյանին*:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի մայիսի 15
ք. Հրազդան
N 60-Ա

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ